ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 04-ի
N 310-Ն հրամանի

Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքում գործող աղբավայրի բարեկարգում
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 40030
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Վարդենիս համայնքն ունի 6 սահմանամերձ բնակավայր՝ Ազատ, Սոթք, Կութ, Նորաբակ, Վերին Շորժա, Ներքին Շորժա
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձրլեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը,	Ծրագիրը թիրախավորված է բարելավել Վարդենիս համայնքում գտնվող, Վարդենիս քաղաքին և նրան հարակից 34 բնակավայրերին սպասարկող աղբավայրի բնապահպանական և ինժեներական վիճակը: Աղբավայրը տեղակայված է Վարդենիս–Սոթք միջպետական ճանապարհի աջակողմյան հատվածում՝ ճանապարհից շուրջ 100 մ հեռավորության վրա, Վարդենիս քաղաքի բնակավայրերից՝ մոտ 1 կմ հեռու: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.89 հա, որից շուրջ 50%-ը զբաղեցված է կուտակված կոշտ կենցաղային թափոններով: Աղբավայրը սահմանակցում է վարելահողերին և չունի պատշաճ ցանկապատում, ինչի արդյունքում պոլիէթիլենային տոպրակներն ու թեթև թափոնները տարածվում են քամու միջոցով հարակից տարածքներում: Այդ հանգամանքը, ինչպես նաև թափառող կենդանիների մուտքն աղբավայր, հանգեցնում են շրջակա միջավայրի աղտոտման, հողի և մթնոլորտային օդի որակի վատթարացման,

	ինչպես նաև հանրային առողջության ռիսկեր առաջացնում: Աղբավայրը սպասարկում է շուրջ 40,030 բնակչություն ունեցող համայնք, ինչը ընդգծում է խնդրի հրատապությունն ու պահանջում է համակարգված մոտեցում աղբավայրի կառավարման, անվտանգության ապահովման և բնապահպանական ազդեցության նվազեցման ուղղությամբ:
Ծրագիր նպատակ	Վարդենիս համայնքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը՝ Վարդենիս քաղաքի և նրան հարակից 34 բնակավայրերի աղբավայրը վերածելով տեխնիկապես հագեցած, բնապահպանական պահանջներին համապատասխանող կառույցի, ինչը կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը, հողի և օդի որակի բարելավմանը, հանրային առողջության ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև կբարձրացնի համայնքի շուրջ 40,030 բնակչի կյանքի որակը՝ ապահովելով անվտանգ և կայուն բնակելի միջավայր:
Ծրագրի խնդիրներ՝	✓ Աղբավայրի տարածքից պոլիէթիլենային տոպրակների և թեթև թափոնների տարածումը հարակից տարածքներում՝ քամու միջոցով, ինչի հետևանքով աղտոտվում են վարելահողերը և բնական միջավայրը: ✓ Հողի դեգրադացիա և օդի որակի վատթարացում՝ թափոնների անարդյունավետ կուտակման հետևանքով: ✓ Կանխարգելել աղբավայրից տարածվող աղտոտիչները և կենդանիների ներթափանցումը, որոնք կարող են առաջացնել առողջական խնդիրներ՝ հատկապես մաշկային, շնչառական կամ վարակիչ հիվանդություններ:
Ծրագրի միջոցառումների իրականացման առաջնայնությունները,	Ծրագիրը նախաձեռնել է Վարդենիսի համայնքապետարանը՝ համայնքի ղեկավարի գլխավորությամբ և աղբավայրի բարեկարգման աշխատաքները հանդիսանում են առաջնահերթ խնդիր: Ծրագրի շնորհիվ կունենանք՝ Ծրագրի առաջնահերթություն է համարվում Վարդենիս համայնքի բնակիչների կողմից անընդմեջ ահազանգող գանգատներն են աղբավայրից դեպի բնակելի հատվածներ աղբի տարածումն է թե՛ թափառող շների և թե՛ քամու միջոցով: Կհարթեցվի մոտ 100մ ճանապարհային տարածք, մինչև ցանկապատման աշխատանքների սկսելը նախատեսվում է մաքրել

	տարածքը՝ թեթև թափոններից: Ծրագրի շնորհիվ ցանկապատված տարածք կանխարգելելու է թափոնների անկանոն տարածումը, բնակչության և թափառող կենդանիների մուտքն աղբավայր, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավումը՝ օդի և հողի աղտոտվածության նվազեցում:
Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները	✓ Վարդենիս համայնքի կենտրոնական աղբավայրի անկառավարելի վիճակի հետևանքով պոլիէթիլենային տոպրակներն ու թեթև թափոնները քամու միջոցով տարածվում են հարակից տարածքներում, աղտոտելով վարելահողերը և բնական միջավայրը: ✓ **Հանրային առողջության ռիսկերի մեծացում** Թափառող կենդանիների մուտքը աղբավայր, ինչպես նաև տարածվող թափոնները և տհաճ հոտը կարող են հանգեցնել վարակների, ալերգիաների, շնչառական և մաշկային հիվանդությունների առաջացման: ✓ **Աղբավայրը գտնվում է մոտ 1 կմ հեռավորության վրա** Վարդենիս քաղաքից և ընդամենը 100մ Վարդենիս–Սոթք միջպետական ճանապարհից, ինչը բարձրացնում է տարածման, աղտոտման և անվտանգության ռիսկերը: ✓ **Բնակչության թվաքանակի մեծությունը** Աղբավայրը սպասարկում է շուրջ 40,030 բնակչություն ունեցող համայնք, ինչը պահանջում է արդյունավետ և կայուն թափոնների կառավարման համակարգ՝ երկարաժամկետ հեռանկարում:
Կապը տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության	Աղբավայրի բարեկարգման ծրագիրը մշտապես եղել է Վարդենիս համայնքի աշխատանքային սեղանին, յուրաքանչյուր միջազգային կազմակերպություններ, որոնք այցելել են Վարդենիս համայնք նրանց ներկայացվել է աղբավայրի վրա բարեկարգման խիստ անհրաժշտությունը: Աղբավայրի բարեկարգման ծրագիրը ներառված է նաև համայնքի զարգացման ծրագրում, սակայն համայնքի բյուջեի սղության պատճառով բարեկարգման աշխատանքները հնարավոր չի եղել

փաստաթղթերի կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտներում համայնքի առաջնահերթություններից բխող առաջարկությունների հետ,	իրականացնել:
Տեղեկատվություն Ծրագրի շահառուների վերաբերյալ	Ծրագրի շահառուներն են Վարդենիս համայնքի բոլոր բնակիչները: Վարդենիս համայնքի բնակչության թիվը կազմում է 40030 մարդ, որից 19,448 կանայք են, 20,582 տղամարդիկ:
Ծրագրի կատարողականի կանխատեսումը (քանակական և որակական ցուցանիշներ՝ ըստ առանձին միջոցառումների)	Ծրագրի քանակական և որակական արդյունքներ ✓ Մեկ ցանկապատված աղբավայրի տարածք 580 գծամերտ, որի ամրացման համար անհրաժեշտ է լինելու 250 հատ հենասյուններ, (ՔԱ) ✓ Թափոնների տարածման կանխում (ՈԱ) ✓ Կենդանիների մուտքի բացառում (ՈԱ)
Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները (կարճաժամկետ և երկարաժամկետ)	Կարճաժամկետ արդյունքներ (1-2 տարի) 1. Աղբավայրի անվտանգության ապահովում ✓ Տարածքը ցանկապատված և վերահսկվող կլինի, կանխելով թափառող կենդանիների մուտքն ու թափոնների անկառավարելի տարածումը: 2. Շրջակա միջավայրի պահպանություն ✓ Աղտոտման տարածումը կնվազի առնվազն 60-70%-ով:
Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի պատճենները կամ տեղեկատվություն դրանց	Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է 1. Տրամադրել ճարտարապետականհատակագծային առաջադրանք՝ էսքիզային 2. Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության եզրակացության ձեռքբերում 3. Բարեկարգման աշխատանքներ իրականացնող

ստացման ուղղությամբ իրականացվող կամ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:	շինարարական կազմակերպությունների համար մրցույթի անցկացում 4. Շինարարականը աշխատանքներում հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագրի կնքում 5. Շինարարական աշխատանքների համար թույլտվության ձեռքբերում
Ծրագրի բյուջե	Բնապահպանական հարկից մասհանվող գումար 1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի և դրանց փորձաքննության եզրակացություն ձեռքբերում – 1.500.000 ՀՀ դրամ 2. Ցանկապատի նյութեր և տեղադրում (580 մ)- 22.000.000 ՀՀ դրամ 3. Հենասյուների տեղադրում (250 հատ)- 2.500.000 ՀՀ դրամ 4. Դարպասների պատրաստում և տեղադրում (2 հատ)- 2.400.000 ՀՀ դրամ 5. Թեթև թափոնների հավաքում և տարածքի մաքրում- 1.077.000 ՀՀ դրամ 6. Մուտքային ճանապարհի բարեկարգում (100 մ)- 3.500.000 ՀՀ դրամ 7. Տեխնիկական հսկողություն և աշխատանքների վարձատրություն- 3.300.000 ՀՀ դրամ Ընդհանուր բյուջե՝ 36.277.000 ՀՀ դրամ

Վարդենիս համայնքի ղեկավար՝ **Ա. Խաչատրյան**